ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«01» մարտի 2019 թվականի N 58

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Համաձայն 17.03.2009թ. թիվ 600 գրության Ձեզ է ներկայացվում 2019 թվականի փետրվար ամսին Հացիկ համայնքի ղեկավարի կողմից արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները:

Նշված ժամանակահատվածում արձակվել է 3 որոշում , արձակվել է 2 կարգադրություն:

Առդիր 9 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

01.03.2019թ.
գ. Հացիկ

կատարող Կ. Պողոսյան
հեռ.098102802

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«07» փետրվարի 2019 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 14

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ – ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԵԼԱ ԱՐԱԲՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ԵՐԵՄՅԱՆԻ, ՍՈՒՍԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆԻ, ԻՐԻՆԱ ԵՐԵՄՅԱՆԻ ԵՎ ԼԻԱՆԱ ԵՐԵՄՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Բելա Արաբյանը դիմել է Արմավիրի մարզ գյուղ Հացիկ, 7-րդ փողոց 10/1 հասցեում գտնվող օրինական տնամերձ հողամասի վրա կառուցված ըստ ժառանգության իրավունքի վկայագրի ձեռք բերված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքների վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով. հիմք ընդունելով Բելա Արաբյանի դիմումը

Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հացիկ գյուղի 7-րդ փողոց 10/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Բելա Միխայիլի Արաբյանի (ծնված 18.05.1937 թվականին), Արմեն Գարեգինի Երեմյանի (ծնված 08.10.1966 թվականին), Սուսաննա Գարեգինի Երեմյանի (ծնված 17.07.1962 թվականին), Իրինա Արմենի Երեմյանի (ծնված 10.02.1995 թվականին) և Լիանա Արմենի Երեմյանի (ծնված 02.01.1997 թվականին) իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը համաձայն Արմավիրի մարզի Նոտարական գրասենյակի գրանցված գրանցամատյան 7520, ժառանգական գործ 663

վկայականի հիման վրա, 0.11 հա օրինական տնամերձ հողամասի վրա գտնվող թիվ 1 բնակելի տան՝ 65.1 քառ.մ (կառուցված 1968թ.), բնակելի տան՝ 59.9 քառ.մ (կառուցված 1970թ.), բնակելի տան՝ 11.4 քառ.մ (կառուցված 1970թ.) 2 լողարանի՝ 9.0 քառ.մ (կառուցված 1972թ.), 3 խոհանոցի՝ 8.25 քառ.մ (կառուցված 1972թ.), 4 կաթսայատան՝ 7.8 քառ.մ (կառուցված 1972թ.), աստիճանների՝ 2.1 քառ. մ (կառուցված 1972 թ.), 5 ավտոտնակի՝ 25.2 քառ.մ (կառուցված 1971 թ.), 6 ծածկի՝ 12.2 քառ.մ (կառուցված 1971թ.), 7 անասնաշենքի՝ 19.6 քառ.մ (կառուցված 1982թ.), և 8 ծածկի՝ 9.8 քառ. մ (կառուցված 1982թ.) նկատմամբ:

2. 2014 թվականին կառուցված 4.1 քառ. մ մակերեսով շինությունը համարել ինքնակամ:
3. 007-007 ծածկագրով 0.11 հա հողամասին կից 0.017հա ավել տարածքը, որը չի գերազանցում տնամերձ հողամասի 20%-ը (ընդհանուրը կազմում է 0.1270 հա), չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքով հատկացնել անհատույց Բելա Արաբյանին, Արմեն Երեմյանին, Սուսաննա Երեմյանին, Իրինա Երեմյանին և Լիանա Երեմյանին:
4. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Բելա Միխայիլի Արաբյանի (ծնված 18.05.1937 թվականին), Արմեն Գարեգինի Երեմյանի (ծնված 08.10.1966 թվականին), Սուսաննա Գարեգինի Երեմյանի (ծնված 17.07.1962 թվականին), Իրինա Արմենի Երեմյանի (ծնված 10.02.1995 թվականին) և Լիանա Արմենի Երեմյանի (ծնված 02.01.1997 թվականին) իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան և շենք- շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Համայնքի ղեկավարի նախկին 23.01.2019թ-ի թիվ 6 որոշումը համարել անվավեր:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ

07.02.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

15 փետրվարի 2019 թվականի N 4

2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 13.02.2019թվականի թիվ 01/10.1/00631-2019 գրությունը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Կազմել 2019 թվականի մարտի 23-ին նախատեսվող համապետական շաբաթօրյակի կազմակերպման և իրականացման գործողությունների պլան՝ համաձայն հավելված 1-ի :
2. Շաբաթօրյակի իրականացման աշխատանքներին մասնակից դարձնել համայնքում գործող համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցներին, կրթական հաստատության աշխատակիցներին և աշակերտներին, մասնավոր ընկերություններին:
3. Կազմել շաբաթօրյակի կազմակերպման քարտեզ՝ համաձայն հավելված 2-ի:
4. Շաբաթօրյակին ներգրավել համայնքի բնակիչներին պատկանող երկու բեռնատար ԶԻԼ 157 , մեկ տրակտոր կցասայլակլով և մեկ բեռնող տրակտոր:
5. Հավաքված աղբը տեղափոխել համայնքի աղբավայր:
6. Ապահովել շաբաթօրյակի աշխատանքների լուսաբանումը՝ լուսանկարել և տեղադրել համայնքի պաշտոնական կայքում:
7. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ
15.02. 2019թ.

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Հացիկ համայնքի
ղեկավարի 2019թվականի փետրվարի 15-ի
թիվ 4 կարգադրության

2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Համայնքի մաքրվող տարածքները՝

1. Հացիկի համայնքապետարանի տարածք
2. «Հացիկի Ավ.Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տարածք
3. Հացիկ համայնքի մշակույթի տան տարածք
4. Հացիկ համայնքի գերեզմանատանը հարակից տարածք
5. Հացիկ համայնքում գործող խանութների տարածքներ
6. Հացիկ համայնքում գործող ավտոտեխսպասարկման տարածք
7. Համայնքի 16-րդ փողոցի տարածք
8. Համայնքի 1-8 փողոցների մայթեզրեր

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Հացիկ համայնքի
ղեկավարի 2019թվականի փետրվարի 15-ի
թիվ 4 կարգադրության

2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ
ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ
ՔԱՐՏԵԶ

1. Հացիկի համայնքապետարանի տարածք. հասցե 16 փողոց 1 շենք /պատասխանատու համայնքի ղեկավար Ա.Եղիազարյան/
2. «Հացիկի Ավ.Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տարածք. հասցե 1-ին փողոց 26 շենք /պատասխանատու տնօրեն Տ.Մկրտչյան/
3. Հացիկ համայնքի մշակույթի տան տարածք. հասցե 4-րդ փողոց /պատասխանատու ավագանու անդամ Ս.Սարգսյան/
4. Հացիկ համայնքի գերեզմանատանը հարակից տարածք /պատասխանատու ավագանու անդամ Պ.Մարտիրոսյան/
5. Հացիկ համայնքում գործող խանութների տարածքներ /պատասխանատու Ա/Ձ տնօրեններ/
6. Հացիկ համայնքում գործող ավտոտեխսպասարկման տարածք /պատասխանատու Ա.Իսկանդարյան/
7. Համայնքի 16-րդ փողոցի տարածք /պատասխանատու համայնքի ղեկավարի տեղակալ Ֆ.Վարդանյան/
8. Համայնքի 1-8 փողոցների մայթեզրեր/ պատասխանատու Է.Վարդանյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«18 » փետրվարի 2019 թվականի N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 77-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

Գ.Հացիկ
18.02.2019թ.

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի
ղեկավարի 2019թ.փետրվարի 18-ի
թիվ 3 կարգադրության

Հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Եղիազարյան /համայնքի ղեկավար/

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Պողոսյան /աշխատակազմի գլխավոր մասնագետ/

Հանձնաժողովի անդամներ՝ Արտավազդ Ասատրյան /աշխատակազմի առաջատար մասնագետ/
Գագիկ Թումանյան /աշխատակազմի առաջատար մասնագետ/
Սարինե Դուդակյան /աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ/
Պերճ Մարտիրոսյան /ավագանու անդամ/
Համլետ Արշակյան /ավագանու անդամ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«11» փետրվարի 2019 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 16

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

Որոշում եմ

1. ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակչուհի (այժմ հանգուցյալ) Արաքսյա Խաչատուրի Հակոբյանին պատկանող բնակելի տանը՝ (ծածկագիր 04-058-032-028) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 3-րդ փողոց 37/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 11.02.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«07» փետրվարի 2019 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 15

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

Որոշում եմ

1. ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Բելա Արաբյանին պատկանող բնակելի տանը՝ (ծածկագիր 04-058-007-007) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 7-րդ փողոց 10/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 07.02.2019թ.